



սկզբունքի կամ գերագոյն շահերի ստի առկա առաջ գաճաճը ներսէս Վարժապետեանի, Բաթիւն և այլոց անմահ անունները: Ինչո՞ւ նրանց Մեծ Ոճրագործին հաւատար պատասխանատունը ներկայացրեց իր փայտէ (այն էլ աղտոտ փայտէ) գրչապատ:

«Նանուն ազգային շահերի, յանուն ազգի փրկութեան, նրա ապագային», կասի անպատճառ Պ. Չ.:

Ականջը խօսի Իւթիւնեանի և Ձոճրագործի իրենց մկրտած «վառեակ»ը այսօր վեր է կացել մեծ «հաւ» է ուղում հաշակել իրեն: Թէ եւ մենք համուզած ենք, որ Պ. Չ.ին այդ յողաճները գրելու գործը «ինձնից առաջ ոչինչ չկար, ամէն ինչ ես սկսեցի» զգուշի մեծամտութիւնն է, բայց փշրենք և այդ «ազգային շահերի» վերջին դիմակն էր Իրմենք այդ կէտին:

Գ.Ա.Պ.Ա.Ր

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. Պոլիս, 21 Մայիս

Պոլսոյ վիճակը այս միջոցին դարձեալ խառնաշփոթ հանգամանք մը առած է. հազիւ թէ քիչ մը շունչ առնել պիտի սկըսէինք և ահա կրկին խոստովաններ կրլլան ու պաշտօնական շրջանակներու մէջ յուշումը կը արթնէ:

Թուրք էֆէնտինները կասկածի մէջ են թէ Լահէի Վեհաժողովը իրենց գլխուն փորձանք մը պիտի բերէ և այնպիսի կարգադրութիւն մը պիտի ըլլայ որ թուրքը իր երկրին մէջ ազատ չպիտի ձգուի և այսուհետեւ իրենց ամէն մէկ քայլը նկատողութեան պիտի առնուի և ի հարկին պիտի ստատուին երբ յանդգնին կրկին

քրիստոնեայ տարրը նեղել ու հալածել:

Կերևի որ զգացած են վերջապէս թէ իրենց ընթացքը դատարարութիւլի դարձած է ամբողջ աշխարհի առաջ և թէ այսուհետեւ իրենց ընթացքը այս կամ այն պետութեան կողմանէ պաշտպանուելու բաղադր չպիտի ունենայ, երբ կը սակզմուի ժողով մը որ պիտի կարգադրէ ամբողջ միջազգային խնդիրները ներքին և արտաքին, ու այս ժողովին մէջ հզօր ձայներ պիտի ունենան Անգլիա, Ամերիկա, Իտալիա և Ֆրանսա որոնք չեն սիրուեր երբէք թուրքը դիւանագիտութեան կողմանէ:

Այս կասկածը որքան որ հիմնական կամ առհիմն ըլլայ, ճշմարտութեամբ սա է որ թուրքը յուշուած է արտասահմանի հայոց շարժումէն ու մտահոգ է գումարուած միթիւնկներուն և Տիար Մ. Չերազի բրած և գեռ ընելիք գիմուսներու արդիւնքի մասին:

Եւ որպէս չի Պոլիկարիոյ, Ամերիկայի, Ֆրանսայի և Առմանիոյ հայերուն դիմումները չէզոքացնէ, գազանի խորհուրդ արբուած է Օրմանեան պատրիարքին որ հակազդեցիկ ձեռնարկ մը ընէ Լահէի Վեհաժողովին մօտ և ամէն յոյս ի գերեւ հանէ:

Ահա այս խորհուրդին անսալով է որ Օրմանեան էֆէնտին անցեալ երկուշաբթի հեռագիր մը քաշեց Լահէի Վեհաժողովի նախագահին՝ յայտարարելով թէ այլևայլ տեղերու հայոց կողմանէ իրենց եղած դիմումներէն «տեղեկութիւն չունին» և անոնք երբէք պաշտօնական հանդամանք մը չունին:

Պատրիարքը այս հեռագիրը զարկած է առանց մէկու մը իմաց տալու. վարչական ժողովէն ոչ ոք զիտէ և մենք իմացանք ստի ուղղակի ստոյգ աղբիւրէ մը, զոր

յայտնելը վտանգաւոր կը թուի մեզ:

Իրաւ է թէ վարչական ժողովը հրաժարած էր և գործէ քաշուած, սակայն պատրիարքը զանազան խնդիրներու համար ի հարկին կը դիմէր անոր անդամներէն ոմանց և խորհուրդ կը հարցնէր, մինչ այս խնդիրը գալանի պահած է ամենէն ալ:

Ըսողներ կան թէ պատրիարքը ինքնաբերաբար բրած է այս բանը, սակայն մենք չենք ուզեր հաստատել և կը կարծենք որ այսքան յայտնի գաւաճանութիւն մը թուրքէն ըլլած է:

Կայսերական հրաման մը կը հրատարակէր հրաժարեալ վարչութիւնը որ գեռ շարունակէ ժամանակ մըն ալ իր պաշտօնը. տեսնենք զոնէ կրօն. ժողովը ի՞նչ գիրք պիտի բռնէ:

Գէլէկեան Լահէ մեկնեցաւ, անշուշտ Չերազի ձեռնարկներուն առաջին անգամը համար: Այս մարդը չղադրի բերէք թրքին գործիք ըլլալէ. ո՞ր որ քշեն, հոն կերթայ: Մեր ազգին մէջ Գէլէկեանները, Մէֆէրեանները, Տատեան Տիրանները և Աճէմեանները չպիտի պակսին՝ մինչեւ որ ատորձանակի փողը չլլէ իրենց կաշիէ դէմքերը: Այդ օրը անշուշտ Օրմանեանի համար ալ «յիշեալ լիջիք»ը մտնալու չէ:

Պատրիարքարանի քարտուղարներէն նշան կ'ըլլան, որ Արք. սանդրիայէն կուգար, բանարկուած է՝ քովէն «Նարմուս» թերթ մը կ'ընելուն համար:

Պատրիարքը շատ ձեռնարկներ բրաւ ազատելու համար, սակայն պարզիւն եղան ցարգ:

Մ.Գ.ՈՒԿ

Թաւրիզ, 3 Մայիս

Հոգաբարձութեան հաշիւներինը Անցեալ կիրակի Ղալա թաղում անդի ունեցաւ նոյն թաղի նախ-

կին հոգաբարձութեան հաշիւներնութիւնը: Եւ ինչ խոյստաւա կութիւն, Աստուած իմ: Քննիչ յանձնաժողովի անդակագիրը լիքն էր նախկին հոգաբարձութեան հասցէին ուղղված «մեղադրանքներով» և «ձանր ամբաստանութիւններով», թէ հոգաբարձութիւնը կանոնաւոր հաշիւ և արձանագրութիւն չէ պահել, թէ որոշ իրաւունքից դուրս, «անսեղիկ» և «աւելի» փողեր է ծախսել, առանց նրա դէմ հատկութիւնը չափելու հայթայթելու, թէ շինութեան համար ծախսված անհամաչափ գումարներ ի մասնաւոր հաշիւը տալուց խոյս է տովել, և այլն, և այլն: Հաստատուութիւնը դատարարեց այդ նախկին հոգաբարձութիւններին «անփոյթ» և «անհոգ» անականներով:

Յակայն աւելի զարմանալին լայ. այդ դատարարաց տեղեկագիրը պատրաստող յանձնաժողովի «խեղացի» անդամներից մէկը վեր կենալով, ուղում էր արդարացնել իր ստորագրութեան տակ գտնաւորած հոգաբարձութիւնը. ծիծաղելի հակասութիւն, և ի՞նչու համար, զիտէք... որովհետեւ իր հայրը պատկանում էր նախկին հոգաբարձութեան: Այս կարգի պատրաստելի և դատարարելի հակասական վարմունքներ սովորական են դարձել մեր հանրային գործերին միջամտող բոլոր պարտներին համար. այսօրայս առած անձերին վաղը սիրում և յարգում են, երէկայ պաշտպանած կարծիքին այսօր դաւաճանում և հակառակում են...:

Էլ աւելի ծիծաղելին կայ Այդքնիչ յանձնաժողովի խեղճ անդամները իրանց իրաւասութեան սահմաններից դուրս գալով՝ բուն հաշուական խնդրի հետ կապ չունեցող ուսուցիչներին խնդրով

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (6)

Ի. ՎԱԶՈՎ

ՊԵԼԻՍԷԼՅԻՆ

(ԻՐԱԿԱՆ ՎԷՊ ՀԱՅԴՈՒԿԻ ՄԸ ԿԵՆՏԷՅ)

Սուրբ Պետրոսի սօսի օրը հասարակական պար կար Պէլ-Մէլի մէջ: Պարոզները ամէնքն ալ կտրիճ երկատասարդներ, զեռափթիթ աղջիկներ և նոր հարսներ էին որոնք իրենց գոյնզգոյն զգեստներով շարժուն ծաղիկներու կը նմանէին: Երջակար կը պարէին չորպաճի նետոի տան առջևի հրապարակին վրայ և իրենց տաբերուն ստիւնով օղբ կը թնդացնէին և կը նուագէին երկու տիկեր, (պուրկարական կայտա): Պէլ-Մէլի նոր սերունդին ոգևորութեանը չափ չկար

Ամբողջ գիւղը հաւաքուած էր պարոզներու շուրջը. ուշադրութեամբ կը դիտէին պարոզներուն և հեղինական ակնարկներ կուղղէին անոնց, մանաւանդ օրիորդներուն:

Իսկ օրիորդները կը խնդային և իրենց նազանքով փայլ կուտային պարին: Խաղէն վարդի պէս կարմրած և երգելէն յոգնած այս գեղանի աղջիկները հետզհետէ աւելի հրապուրէչ կը դառնային:

Մարդ կը հիանայ այս նաճապետական պարի մէջ պուրկարուհոյն թովիչ ձեւերով: Մերթ սաստակով և մերթ մեղմ շարժումներով իրենց ծփուն խոստովակները կը հղին երկատասարդներուն առնական զէմքերուն և անարատ սիրոյ առաջին կայծը կը նետեն այդ սարի ձագերու անմեղ սրաբերուն մէջ: Յամառութեամբ կը մրցին պարող երկատասարդներու հետ, կը ջանան յոգնածը գուրս նետել և անոր զուռին թափել ծիծաղի և կատակի տարափ մը:

Պարը հետզհետէ կը տաքնար... կարծես բնութիւնն ալ կը մասնակցէր ընդհանուր հրճուանքին: Կայտարարականամարէն արեւը, գարնան պէս խնդումներս, իր կենսարար ճաճանչներովը կը հեղեղէր բնութիւնը և ետուն ու զուարթ կեանքի շարժումը կուտար:

Պալքաններու վէճ ու բարձր գազաթները փառապանծ չքով մը կը մխուէին անսահման հորիզոնին մէջ, որ երբեմն նուրբ գորշ գոյնով, երբեմն ալ արծաթագոծ ամպերէ պսակներ հիւսելով կը գարգաէր անհունութիւնը:

Հսկայ լեռներու ետեւը կը հանգչէին դեղնած, մերկ և ազատ դաշտերը ամբան արեւուն հեշտալի ճառագայթներուն տակ:

Գիւղին հիւսիսակողմը, մերկ տափարակները և ամայի բարձրութիւնները մտնելային լուսթեան մէջ՝ վշտաբեկ կը դիտէին իրենց անուշարոյր և անբերի ծոցերը, նման որբերու՝ որ նախանձով կը դիտեն իրենց հարուստ դրացիները: Կենդանութեան նշոյլ մը չկար հոս: Կենդանութիւն և ամայի լուսթիւն իր թագաւորներ: Չէր լուսեր ոչ հովիւն սրինգը, ոչ ոչխարներու և գառնուկներու մայցը. միայն անշարժ չոր քարեր կային հոս:

Բայց պարը գեռ կը արունակուէր գիւղին հրապարակին վրայ, ու հեարգհետէ աւելի կը զուարթանար: Տիկը լսած էր. հիմակ ժողովրդական

և ազգային երգեր կերպէին ոգեւորութեամբ:

Թանձր փոշին երկինք կը բարձրանար: Քրտինքը ազամանդեայ շիթերու պէս կը հոսէր օրիորդներու այտերէն: Երգը իր հայրենասիրական ոգիովը աւելի վստած էր այս սարի տափարակներու սրտերը:

Միայն օրիորդները կերպէին. երկու մասի բաժնուած՝ իրարու պատասխանելով: Ամէնքն ալ յափրջտալուած էին, որովհետեւ երգը նոր էր, իմաստը ամենուն ալ յայտնի և հետաքրքրող:

«Ուր տեսնուած և լսուած է, որ աղջիկը վոյվոտա ըլլայ եօթնասուն քաջերու վրայ: Վերանուն ստորաքաջերը գիմացի կանաչ անտառը. կանաչ ծառի տակ՝ պաղ աղբիւրին քովը: Եւ կըսէ Մաւլչօի:

— «Հէյ, Մաւլչօ, քաջ դրօշակակիր, բան մը պիտի հարցնեմ քեզի՝ ճիշդը պիտի հօտիս ինձի: Ինչո՞ւ սրբողած են քու քաջերը և խօսք մը չեն բտեր ինձի: Մաւլչօն կը պատասխանէ:

— «Վերանա, հարս իմ սիրունիկ՝ կուզես որ չը ստեմ և ամէն ինչ

էլ զբաղվել էին . . . Պարզապէս «ուէկլամ» էին ուղում անել իրանց բարեկամ գանգրէնացած ուսուցիչներին : Սակայն այդ նրանց չաջողվեց . . . զուրս եկաւ մի պարոն և հաստատ փաստերով ու պաշտօնական արձանագրութիւններով հաստատեց այդ խաւարամբու և խաւարասիրտ ուսուցիչներին խայտառակ անցեալը և զործունէութիւնը և տեղեկագրից շնչել տվեց , ի հարկէ ժողովականների քուէներէ բացարձակ առաւելութեամբ , այդ անպատուարեր «ուէկլամ» :

Հետեւեալ նամակով կը պարզեմ , թէ ինչպիսի մտորակ են իմ ակնարկած հին ուսուցիչները :

Մ Ի Բ Չ Ա

Բրովիսկես , 13 Մայիս

Բրովիսկեսն Ամերիկայի նշանաւոր քաղաքներէն մին է , ունի բազմաթիւ գործարաններ ու խոնարհ , համակերպուող ժողովուրդ մը . այս պատճառով է որ հայերու սիրելի եղած է : Ամէն կողմերէ հոս կուգան բազմաթիւ հայեր , որոնց թիւը այսօր կը հասնի 5—600ի , 30—40 ընտանիքներ : Հայերու մեծամասնութիւնը գործարար է , «գոթիքներու» , գործարաններու մէջ կաշխատի , կարօտով ու թախիծով յիշելով իր հայրենիքը :

Հայերս ունինք հոս բաւական համակերպի վարդապետ մը , ճիւթանգառան մը և վարձու առած սրահ մը , որու մէջ կիրակի առաւելները եկեղեցական արարողութիւն կը կատարուի : Կէս օրի ատեն կը բացուի գրագարանը գիրք առնելու համար , իսկ երեկոյները կուենանք հրապարակային ժողովներ , որոնց մէջ ազատ ատենախօսութիւններ կը լլան : Ըսածներուս համարեա ամէնն ալ

ուսին Ամերիկայի միւս գաղութներն ալ՝ աւելի կամ պակաս չափով , իսկ Բրովիսկեսն միակն է որ ունի նաեւ 12—15 հոգիէ կազմուած նուազախումբ մը : Խումբը երեք տարուան անդուլ աշխատանքով յաջողած է սորվիլ հայերէն , անգլիերէն և այլ երգեր նուագել : Տարին մէկ երկու անգամ նուազահանգէս կուտայ հոս և երբեմն ալ կելլայ շրջագայելու ուրիշ հայ գաղութներու մէջ զօնսէրներ տալու համար :

Ն Ա Մ Ո Ա Ա Տ Ո Ւ Փ

Ս Ի Լ Ի Ս Տ Ի Է , Պ . Ա լ ք . ի ն . կը խնդրենք բաժնեկիները հաւաքել :

Ռ Ո Ւ Ս Չ Ո Ւ Ք . Պ . ն երեցէք ձեր թիւը ու շ գալուն համար , «էքսքսիտիք»-ի փոխուելուն պատճառով քիչ մը կարգը խանգարուեցաւ : Այսուհետեւ կանոնաւոր կը լլայ :

Ք Է Յ Յ Յ Ի Ն Ը Է , Պ . ձ ի Վ Է Ի Ն . — Կը խնդրենք գանձածները շուտ զրկէք և հաղորդէք այն անձերու անունները , որ չեն ուզեր վճարել :

Ս Ս Յ Ի Լ . Պ . Ս . ի ն . — Կը խնդրենք շարունակել վերջին թըղթակցութեան նման տեղական լուրերով հարուստ թըղթակցութիւններ : Նախընթացը անհնար եղաւ տպագրել : Տառերու մասին ոչինչ կրնանք ըսել . սպասեցէք Վ . ի վերադարձին :

Ա Մ Ե Ր Ի Կ Լ . — «Երկու սէր» գրքոյից կը զրկուի ու զորչներուն քանի մը օրէն :

Գ Օ Ր - Օ Ր Է Ի Ս Վ Ի Յ Ի Լ . Պ . Հ ր . Վ ր Թ . ի ն . — Ձեր ըսած քաղաքին մէջ բաժանորդներ և 2 թըղթակից ունինք :

— — ) . ( — —

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ք Ր Ո Ն Ի Կ

Գահիրէի և Ալեքսանդրիոյ մէջ միթիւններ են տեղի ունեցեր : Անոնց նկարագրութիւն և որոշումները կը հրատարակենք հետեւեալ համարի մէջ :

— Հրաւիրուած «Հէր-Ֆատէր-լանտ» թերթը կը հաղորդէ հետեւեալը . «Պ . Մ . Չերազ , Լ'Առմէնի» թերթի տնօրէնը , որ զրկուած է Պուլկարիոյ , Ռուսանիոյ և Եգիպտոսի հայերու կողմէ իբր պատուիրակ Հայկական հարցի համար աշխատելու խաղաղութեան ժողովի անդամներու քով , արգէն ներկայացուցած է ժողովի նախագահին իր կոչման վերաբերեալ ամէն տօքիւմանները և տեսակցութիւններ ունեցած է ժողովի անդամներուն մեծ մասին հետ :

— Պուլկես Մայիս 16ին կը հաղորդեն . «Բ . Իրան հետ եղած բանակցութիւնները հայ գաղթականներու վերադարձի մասին՝ յետաձգուեցաւ մինչև Զինօվիէֆի գալուստը : Կրտսէ թէ Վիէնայի նախկին դեսպան Զիա փաշան նշանակուել է պատուիրակութեան մը պետ , զոր Սուլթանը կուղէ քանի մը օրէն զրկել Ձարի սուրը , խնդրելու որ հրաժարի հայ գաղթականները վերադարձնելու որոշումէն :

— Թուրքիայէն 3 վարդապետներ կերթան Էջմիածին եպիսկոպոսանալու : Յովհաննէս Արշարունի (Երիզայի «Իբր թէ առաջնորդ» , որ երբէք Երիզա չէ եղած) , Յովսէփ Այվազեան (Տրապիզոնի անգործ ու քնած առաջնորդ) և Կեսարիոյ Տրդատ վարդապետը (վաղուց ի վեր կը վարձատրուի թուրք կառավարութեանէ . . . ) — ասոնք են եպիսկոպոսացուներու անունները : Անպէտք եպիսկոպոսները կը շատնան : (Մշակը կը հաղորդէ) :

— Կովկասի Սղնախ քաղաքի մէջ ի նպաստ «Եղբայրական օգնութեան» որբանոցներու ներկայացում մը տուեր և 88 ռուբլի ալ հանգանակեր են : Արդիւնք եղած է 210 ռուբլի , որ զրկուած է Պ . Ջանչեանի :

— Տրապիզոնի մէջ Վանայ սովետից համար հանգանակութիւն է կատարուել և 39 սովի հաւաքուել :

— Սուրմալուի գաւառը հաւաքուած Երեւանեան նահանգի հայ գաղթականները , Կովկասի կառավարչապետի թըղթի համաձայն՝ նորէն ցրուած են իրենց նախկին տեղերը ցնոր կարգադրութիւն : Թուրք սահմանապահ զօրքերը ներս չեն ընդունած : Իսկ Կարսի գաղթականներու սահմանէն ներս չթողնելու առթիւ , լուրեր կը պատին , որ ռուս և թուրք զօրքերու մէջ ընդհարում է տեղի ունեցեր : Արեւմտ Կովկասի հայ գաղթականները առ այժմ կրկին հոն մնացին :

— Մայիս 13ին Մոսկուա քաղաքին մէջ մեռաւ «Փարոս Հայաստանի» (այժմ դադարած) թերթի խմբագիր Զարմայր Մանրեանց , Հանգուցեալ Մուսկուայի «մամուլի գործերու աւագ տեսուչն» էր :

— Պուլի թերթերէն կը տեղեկանանք որ Պոլոս փաշա Նուար Պատրիարքի զրկած է 200 սովի , որպէս զի Շահնազարեան վարժարանի մնացած 800 սովի զրայ բարդուելով տոկոսի տրուի և երբ գումարը բարձրանայ 4000 սովի , Կիլիկիոյ մէջ վերաբացուի Շահնազարեանը : Իրաւ որ ըսելիք չի կայ Պոլոս փաշայի այս առատաձեռնութեանը :

— «Րայիս Պօզ» պաշտօնական թերթին Լահէյէն կը հեռագրեն . «Արտաքին գործոց նախարարի ցանկութիւնով արգիլուեցաւ Հայ

ճիշդ ըսեմ քեզի : Քեզի սուտ ըսել չըլլար . երէկ ես գաղանի մտիկ ըրի , երբ իմ քաջերը կըսէին իրար . «Մենք ազնիւ վոյժօտա չենք ուզեր . «Կինը իմ սուրս հանել չի կրնար . «Կինը իմ գլուխ կարել չի կրնար . Վլքանան կը պատասխանէ :

Հէյ . Սլաւօ թաջ զրօշակակիր . Գիտե՞ս , հոն խոր ծակ մը կայ . Անոր մէջն է սե նետօն , Վատ ու վախառու նետօն . Եթէր տարի է որ հոն է Շղթաներով կապուած . Հէյ , Սլաւօ՛ զնա հանէ Եւ առջեւ րբը չար նետօն . Թող տեսնան քու քաջերը Որ Վլքանան կրնայ . Որ Վլքանան զրուկ կարել Ու ձեր վոյժօտան ըլլալ :

Երբի վերջին սողը գեռ չերգուած՝ յանկարծ խոսնաչիթթութիւն մը տիրեց . պարբ խանգարուեցաւ ամէնքն ալ աչքերնին ուղղեցին պարի մէջակող , ուր սպրցած էին ութ սաս հօգի նոր պարողներ և կուզէին պարը շարունակել : Նորիկներն ալ գիւղացիներ էին , որոնցմէ աւելի աչքի կը գարնէին հսկայ մը և անմօրուս մէկը :

— Սլաւօն է . չըսեկ մը լսուեցաւ ամբողջի մէջէն :

— Վլքանան ալ , լսուեցաւ ուրիշ կողմերէ :

— Սլաւօի խումբն ալ հոս է , գոչեցին մէկ քանին : Սկիզբը պարը քիչ մը դադրեցաւ , բայց շուտով շարունակուեցաւ : Ոչ ոք չը համարձակեցաւ պարէն զօրս ելլալ :

Յանկարծակի ապոււմը միայն քանի մը վայրկեան տեսց : Պարողները աւելի ոգեւորուեցան և շարունակեցին երգել ու պարել : Օրիորդներու քնքոյ ձայնին կը միանար Վլքանայի հոժեկու և բնորոշ ձայնը , որ կորստար : Պարողները աւելի արբելու կը պարէին : Հիմակ զիւղացիները ծարաւի աչքերով կը լափէին այդ հոչանաւոր «պատմական հերոսաբուր» որ այնքան սարսափ էր ազգած իրենց հայածողներուն :

Չէին կրնար իրենց անկուշտ և հիացմամբ լի նայուածքները հեռացրնել Վլքանային տանական վէս զլմքէն . հայուկային զգեստները բոլորովին կերպարանափոխած էին զանի կանացի վայրենի գեղեցկութիւն մը կը փայլէր անոր վրայ : Քաջ պա-

տերազմողի մը յատկ . թիւններովը օժտուած՝ Աթէնաս դիցուհուն կը նմանէր : Իր գօտիին մէջ խրած էր վղղակիւս կոթով ևս թաղան մը և երկու ասրճանակներ , իսկ ուսը անցուցած հրացան մը :

— Ինչ հրաշալի կերպարանք , կըսէին զիւղացիները :

Իսկ օրիորդները , իսկ հարսները . . . Աստուք , աստուք բացառութեան , կը նախանձին Վլքանային . ամէնուն տաք սրտերն ալ կը տենչային Վլքանայի նման ըլլալ , հաւասարիլ անոր և երանի կուտային՝ որ Սլաւօի պէս կարիճ մը ունէր :

Վերջապէս պարը վերջացաւ : Ամէնքն ալ վազեցին Սլաւօի և Վլքանայի քով : Խուռն բացուելով թէնէ պատ մը կանգնեցաւ հերոս ամուսիններուն շուրջը՝ ամէն ոք զըշտապէր զրկախառնուելու անոնց հետ և բարի գալուստ մաղթելու հարգատ քաջերուն :

Իսկոյն հայրուկներուն զինի հրամցուցին և եղբայրական գործով իրենց անկեղծ հրճուանքը գրեթէ արեւցոյցիչ սգիովը աւելի սաքցուցին :

Այս անակնկալ ուրախ վայրկեաններու մէջ ամէնքն ալ վտանգը մոռցած էին : Բնական ուրախութիւնը , որ առանց կաշկանդումի զուրս կը ժայթքէր այս պարզ լուսնիներուն սրտերէն՝ ամէն ինչ մոռցնելու սուած էր : Գինին ամէնքն ալ թմբեցուց և մանկական անհոգ ցնծութեան մէջ ընկնելով անձնատուր ըրաւ անվերջ գուարճութեան :

Թուրքին մասնել , գաւաճանել , և ոչ մէկու մը մաքէն կանչելը . ասանկ անձի մը գոյութիւնն անգամ չէին կրնար երեւակայիլ այս ընդհանուր ուրախութեան մէջ : Միակ մարդը , որի հոգին գրպանին մէջն էր՝ չօրպաճի նետօն էր . անոր բացակայութեամբ կանհետանար ամէն անմաքուր դիտաւորութիւն և չար միտում :

Նետօն վերցած էր գիւղէն . յարիքի մեծն ալ հեռացած էր : Առաջ , քանի որ կիլիկի , ամենուն հետ ալ բոնաւորի պէս կը վարուէր : Սլաւօին տեսնողը յանցաւոր կը կարծուէր , կը ձերբակոյտէր : Առանց ազատուելու յոյսն ունենալու : Հիմակ որ նետօն չկայ , ո՞վ պիտի երթայ ա-

գիտնական Պ. Չերազի դասախոսութիւնը հայերէն մասին, որ բազմաթիւ պատկերներով պէտք լուսարանուեր: Կը կարծուի, որ դասախոսութիւնը խիստ խայտառակ անախորժութեան մէջ պէտք է գնէր թրքական պատուիրակներուն, սոցոր համար արգելուեցաւ:

— Այս համարի նիւթերու խիստ առատութեան և տեղի սլուծեան պատճառով հետեւեալ անգամ կը հրատարակենք Պ. Չերազի թղթակցութիւնը Խաղժողի նախագահի հետ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԼԱՆԷԻ ԺՈՂՈՎԻ ԾՈՒՐՁԸ. — Եւրոպական ամէն պետութիւններու արտաքին գործերու նախարարութիւններուն զրկուած է, բազմաթիւ գիտնականներու, քաղաքագէտներու, գրական անձներու, բարեգործներու և այլոց կողմէ ստորագրուած ընդարձակ «խորհուրդներ» կամ «ներշնչումներ» խորագրով շԵՐՂաբերական մը «խաղաղութիւնը ապահովելու լաւագոյն միջոցներու» վերաբերութեամբ: Ընդհանուր խաղաղութիւնը ապահովելու անհրաժեշտ պայմաններէն մին (Բ. կէտը) ստորագրողները համարած են «կրէտէի և Հայոց հարցի կարգաւորումը»:

«Չգուշաւոր կըլլայ, եթէ Գոնֆէրանը, նախ քան լուծուիլը՝ լաւագոյն կերպով կանոնաւորէ կրէտէի և Հայոց խնդիրները, երկու գէշ կերպով հանգցուած հրաբլխային լեռներ, որ կրնան նորէն բռնկիլ, զարհուրելի պայթումներ առաջ բերել և վառօդի սակաւութիւնը պէս ողբ հանել ամբողջ եւրոպան»: Այդ երկու հարցերը համարելով «ընդհանուր բարգաւազութիւններ առաջ

բերող վտանգաւոր պրիւրներ», շրջաբերականը կառավարիչ անոնց կանոնաւորելու միջոցները Ստորագրած են. նախագահ՝ Տօքթ. Տիւմոնըալիէ, բժշկական ճեմարանի անգամ և պատուոյ լէժիօնի սպայ. փոխ նախագահներ՝ Թէօֆիլ Բուսէլ — էնթիթիթի անգամ, ճեմարանական, բժ. ճեմ. անգամ, պատուոյ լէժիօնի սպայ. Հանրի Պօշէ — հանքերու ընդհանուր տեսուչ, հանքային գարոցի պատուակալ ասոցիացեալ, պատ. լէժ. սպայ. Տօքթ. Սէնար՝ ճեմարակ., Կրէյ քաղաքի պետ. ևայլն, ևայլն... ամէն երկրէ, ամէն տեսակ բարձր պաշտօններէ անձեր, որոնց մէջ կան — Տրարիտօ՝ ճեմարանական, նախկին մրնիտոր. Էօփէն Կերէն, ճեմարանական, նախկին մրնիտոր. Ժիւլ Բօշ՝ ֆր. շամպրի երեցփոխան, նախկին մրնիտոր. Սեփերիանօ — շեքեալի, նախկին մրնիտոր. Սիլվիո-Բրիտօն և Ալֆրէտ Ֆուլյէ հանրաժամութեամբ անձերը. ևայլն (Տես Իւմանիթէ նուրէլ-Մայիսի համարը):

(Վնկալը խօսի Պ. Չոպանիանի. կը կարծէ, թէ միայն «Գրօզակ» խմբագրութիւնն է որ հայոց հարցը եւրոպական խաղաղութեան վտանգ սպառնացող հարց կը կարծէ...)

ԹՈՒՐԻՔԻԱ. — «Պրանքֆորտ» թերթին Պօլսէն կը հարցորդեն, որ Սուլթանը իրատեով մը հրամայեր է 1. 2. 3. 4 և 5րդ զօրաբանակներու վրայ առեցնել 585 «իւլիէ» նոր գունդեր և ոչընչացնել զինուորական ծառայութեանէ ազատող առանձնաշնորհումները:

— Երկր թերթը կը հարցորդէ, որ Անգորայէն Բաղատա երկաթուղիի գիծ մը շինելու ծրագրը սուր կերպարանք առնելով, Ռուսիա միջոցներ ձեռք առած է այդ առթիւ:

Պոլսոյ ռուս դեսպանը պաշտօնապէս յայտարարած է, որ Անգորայէն Բաղատա սանող գիծը խիստ մօտիկ ըլլալով ռուսական սահմաններուն եւ ռուսական ազդեցութեան շրջանակին, խիստ մեծ գոռարութիւններ պիտի առաջացնէ ռուս կառավարութեան կողմէն. իսկ Ղօնիսէ Բաղատա սանող գիծ մը, բաւական հեռու ընկած ըլլալով ռուսիոյ սահմաններէն, և ոչ մէկ հակաճառութեան կը հանդիպանոր կողմէ:

— Ժանտախտի դոյութիւնը պաշտօնապէս հաստատուած է Եգիպտոսի մէջ: Բիւրէս, Չմիւլանիա, Պօլիս արդէն քարանթիւններ հաստատուած են, որ Եգիպտոսէն եկող նաւերը 10 օր կը մնան:

— «Բոսնի» կը հեռագրեն Պօլսէն Մայիս 20ին, որ Բ. Գուռը երէկ երեկոյ հեռագիր մը զրկած է Բեյերսպուրկի իր դեսպանին, հրամայելով պնդել ռուս կառավարութեան Թոյլ տալու թրքական հիւպատոսութիւն մը հաստատելու Երեւանի մէջ: Յաճախ կրկնուած այս պահանջը միշտ մերժուեր է ռուս կառավարութեանէն, որ շուրջ անոնք թուրքերու հակողութիւնը իր գործերու վրայ:

ԻՌԱՆԻԱՆ ԿՐԻՍՏԻՆՆԻՍ Ի ՆՊԱՍՏ «Աղբիւնց Կրքարանի» «Սաէտիւնէնիէ» սրահին մէջ այս երեկոյ ժամը սթուկէսին: Դաշնակ, Վաթակ, Երգ, Հայերէն և պուլկարերէն մենախօսութիւններ: Կը մասնակցին. Տ. Ալպանօ, Օր. Օր. Ամիրխանեան, Ղօնչէկիլիան, Բիւրքճեան, Տէմիրճեան, Կարապետօֆ. և Պ. Պ. Ի. Ամիրխանեան. Բրիթօֆ, Բուայրօֆ և Գալֆայեան:

սոր անոր գրպարեալու կառավարութեան առջեւ: Այս հիմնական պատճառով գիւղացիները մէկէ մը վախ չունին, ոչ ալ դաւաճանութեան մը ուրուականէն դողալու պատճառ մը: Ազոր համար աւելի կուրախանային, աւելի ջերմօրէն կը գրկախառնէին իրենց հերոսները:

Միայն նետօի ընտանիքը յուսահատաբար կողմար: Օր չէր ըլլար որ չենթարկուէր գիւղացիներու արհամարհանքին եւ անարգանքին: Մինչև անգամ փողոցի երեխաները կը քարկոծէին զանոնք:

«Ազգի արիւնը խմողներ. դաւաճաններ» մակդիրները կը տեղային անմեղ ընտանիքի զխուսն:

Սլավոն մօտեցաւ հարսներուն եւ աղջիկներուն. որ երիտասարդներու հետ կլոր սեղան մը կազմած երգի նշանակութիւնը կատուգորանէին, եւ ըսաւ անոնց.

— Գոյրեր եւ եղբայրներ, սիրուն երգ էք յօրինած, «քաջերու համար կարճէ երգը»: բայց ես գիտողութիւն մը պիտի ընեմ ձեզի. երգը մինչև վերջը լաւ չի խօսիր ձեզի:

— Եթէ սխալ է, չտկեցէք. գոչեցին օրիւրդները. լաւ է որ մեր քովն ես:

— Սեւ գէպին բուն իրողութիւնը պատմէ մեզի, վոյժօտա, ըսին երկրասարգները:

— Ես ըսեմ, պատասխանեց Վլքանան, ես վոյժօտա չեմ. Սլավոն է: Աղջիկները եւ հարսները վարանմամբ իրարու երես կը նայէին. երբ Վլքանան վոյժօտա չէ, այն ատեն երգը բողբոջի կը փոխուի: Ասիկա իրենց շատ յուզեց:

— Չէ, չը պիտի փոխուի երգը, գոչեցին օրիւրդները վճռական կերպով՝ բարձր ու ճշուն ձայնով արձակելով:

— Ի՞նչ ալ ըլլայ, երգը ազոր է, նկատեցին ուրիշները:

— Ես ալ կըսեմ որ երգին բնաւ չը գոչիք, ըսաւ Սլավոն. միայն վերջի աղբը քիչ մը փոխուի է:

— Ի՞նչը, ի՞նչը:

— Այն աղբը, ուր կսուի «նետօ մորթում է»:

— Ի՞նչ է, ըսել է կախումս է, ընդհատեցին քանի մը հողի:

— Կախումս ալ չէ:

— Ուրեմն միշտ այն «ձակի» մէջը ըլլալու է:

Հոն ալ չէ:

— Դուք ալ շատախօսութիւններով ժամանակ կանցնէք, անդիէն ըսաւ ձեր գիւղացի մը: Մեր ի՞նչ գործն է. բաւական է որ այդ շուրջ ստակած ըլլայ:

— Նետօն ողջ է, ըսաւ Սլավոն: Այս խօսքերը շատ պզտիկ եւ անախորժ ապաւորութիւն մը թողուցին խոնուած ամբողջի վրայ:

— Ո՞ղջ է...:

— Այո, ողջ է եղբ:

— Ըսել է ազատուած է:

— Քանի հողի ունի եղբայր այդ անիծածը, որ գոթաքին մէջ ալ իր հողին չը փչեց, եւ Սլավոնի ձեռքէն ողջ մնաց: Այս պէս կըսէր պտուակին մը որ ուրախ ազգակները լսելով՝ սուրբ թողած եկած էր:

Այս տեսակ հարցումներ անցնող կողմէն կը տեղային կարկուտի պէս վոյժօտային գլխուս: Սլավոն դաւնալով իր ընկերներուն՝ բան մը փոփոց անոնց սկանչին եւ յետոյ դաւնալով գիւղացոյ՝ ըսաւ.

— Պարագ տեղը անհանգիստ մի ըլլաք. Նետօն մեր ձեռքն է:

Թ. Ա. Տ. Ր. Ն.

Կը լսենք որ խոմբ մը երիտասարդներ ի նպատակ Տ. Չարեանի այս շարժում ներկայացունելու են Վ. Հիւկօի «Լուրբեցիա պօրճիա» արամը թրքերէն լեզուով:

ԿԻ ՓՆՏՈՒՄ

Չմեղածագցի Երեց Ագարակ գիւղէն Մկրտիչ Առաքէլեան. գաղթականութեան ժամանակ Պուլկարիա գալով կորսուած է. ուստի կը խնդրուի տեղեկութիւն ունեցողներէ ողջ կամ մեռած լինելը հաճին իմաց ապամբարգրութեանս:

ԿՈՒՂԻՔ ՀԱՐՄԱՆՆԻԼ

Գիմնեյէ՛ք Մ. Թիւթիւնեան եւ ընկ. Ի Ռուստօք

Ուր ըսաւ առաջնոյն կը վաճառեն, Սօֆիա քաղաքի՝ Պուլկարիան կառավարութեան կողմէ վաւերացած վիճակահանութեան Բ. շրջանի ստակները:

Օտար երկիրներէ յանձնարարութիւններ եւս կընդունուին:

ՊՕՐՍԱ

Վառնա 26 Մայիս

ՊՈՒՂՏԱՅ  
Վալօն, լիպրա 55—58, հէքթօր. 10—12.75 ֆրանք  
Արապա, լիպրա 55—60 հէքթօր. 12—13.50 ֆրանք

ԱՐՄԱ  
Լիպրա 42—50 հէքթօր. 7—7.10 ֆրանք

ՄԻՍԻՐ  
Վալօն, 55—57 լիպրա, 6.10—6.20  
Առապա, 55—60 լիպրա, 6.40—6.50  
Կիւնալ 10—12 վալօն, 8—10 առապա  
Կէլմէքալ տիր:

Առապա մուսուլէտի նարուէն 21 ֆրանք հիսապը իւլ տիր:

ОТГОВОРНИКЪ: А. СУКЯСОВЪ  
Печатница „Взаимность“ Варна.

Ուրախութեան կրկնակի ազդակները օղբ թնդացուցին. կարծես այնպայ ճնշող ո ժի մը զպանակներէն ազատուեցան:

— Փառք Աստուծու, ազատած չէ եղբ:

— Ամուր կը պահէք. հարցուցին քանի մը հողի վարանտ ձայնով:

— Լաւ պահեցէք, կը պտոյնի ուրիշները:

— Մի վախնաք, լաւ պահած ենք զինքը. հիմա ձեզի կը հարցնեմ. ի՞նչ ընենք այդ նետօ չօրպանին. տանջուողը եւ կեղքուողը դուք էք. ոչ թէ ես: Ձեր քաջածը անտանելի էր. եղբայրներ, ի՞նչպիսի պատիժ տանք: Ըսէք. արդարութիւնը կը պահանջէ, որ դուք վճռէք. ան ձեր բռնաւորն էր, այժմ դուք անոր դատաւորն էք:

Իսկոյն լուծութիւնը տիրեց այդ յուզեալ ամբողջին մէջ. Գիւղացոյ արամագրութեան այնպէս կերեւէր որ ասոնք պատրաստ էին արդար վճիւ մը արձակել, որովհետեւ իրարու հետ կը խփախային, խորհրգածութեան մէջ էին...

Թարգմ. Պ. ՍԻՐԷՄՃԵԱՆ